ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6
«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 30-ը հունիսի 2021թ.
Ժամը 14[15]

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ Ա. Ասատրյան (ԳԱՊ),

ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Գ. Ուատյան,

ՀՀ ՋՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության 1-ին բաժնի պետ, գնդապետ Ա. Առաքելյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի պետ Ա. Գրիգորյան:

Բացակայում էր՝ ՀՀ ՋՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության 1-ին բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Կարապետյանը:

«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 25.06.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/38 որոշումը քննարկելու մասին.
2. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
3. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 25.06.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/38 որոշումը քննարկելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 2021թ. հունիսի 8-ին "Յունիքիմ" ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է բողոք: "Յունիքիմ" ՍՊԸ-ն խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին փոփոխելու 01.06.2021թ. N 4 արձանագրության 1.1 կետով "Յունիքիմ" ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը և հայտը գնահատել բավարար:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 25.06.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/38 որոշմամբ /կայքում հրապարակվել է 29.06.2021թ./ բավարարել է "Յունիքիմ" ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը: Քննարկելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 25.06.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/38 որոշումը, գնահատող հանձնաժողովը որոշեց չեղյալ համարել 01.06.2021թ. N 4 արձանագրության 1.1 կետով "Յունիքիմ" ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը և քննարկելով "Յունիքիմ" ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը, գնահատող հանձնաժողովը այն գնահատեց հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Գրիգորյան)

2.1 07.07.2021թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել <Յունիքիմ> ՍՊԸ-ն:

ՀՀ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Նախահաշվային գումարը	1-ին տեղ զբաղեցնող կազմակերպության			Մրցույթին մասնակցող կազմակերպությունների		
					անվանումը	գինը		անվանումը	գինը	
						առանց ԱԱՀ	ընդհանուր		առանց ԱԱՀ	ընդհանուր
1	Շարժիչի յուղեր /15W40/	կգ	150 000	191250 000	Չկայացած			<Մոսէքսո> ՍՊԸ	235 950 000	283 140 000
								<Ավտոֆան էյ Սի> ՍՊԸ	240 625 000	288 750 000
2	Հակասառիչ հեղուկ /Տոսոլ Ա-40/	կգ	200 000	74 200 000	<Յունիքիմ> ՍՊԸ	59000 000	70800000	<Մոսէքսո> ՍՊԸ	118 700 000	142 440 000
								<Յունիքիմ> ՍՊԸ	59 000 000	70 800 000

2.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

2.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Ա. Գրիգորյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Ա. Ասատրյան

Գնահատող Գ. Ոիստյան

Գնահատող Ա. Առաքելյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան